Ա. ՄԱԴՈՅԱՆ

ՎԿԱՅԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՂԵՐ

Վկայաբանական բովանդակությամբ բանաստեղծություններ գրվել են դեռևս վաղ միջնադարում, Մեսրոպյան դպրության արշալույսին: Առաջին ամենանշանավոր երկը Կոմիտաս կաթողիկոսի՝ Հռիփսիմյան կույսերին նվիրված «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականն է, որ, ծավալուն լինելու պատճառով, բանասիրության մեջ կոչվում է նաև պոեմ: Քերթվածի տնագլուխ գրերը հոդում են հայոց այբուբենը: Շարականների մեջ մյուս նշանավոր ստեղծագործությունը Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր»-ն է՝ նվիրված Վարդանանց հերոսների հիշատակին («Ներսէսի երգ» բանակապով):

Այս, ինչպես նաև մի շարք այլ շարականներ, գանձեր, տաղեր հույժ հանդիսավոր շեշտ ունեն, գրված են մեծ մասամբ կանոնավոր տաղաչափությամբ, ինչ-որ նրանց հաղորդել է տոնականություն, վեհություն. այսպես.

«Ընկերք միամիտք մարմնական կենցաղոյս,
Նահատակք հաւատարք և հոգւով միացեալք,
Միաբան ընթացեալք ի տեղի ճակատու
Ջինեցան հաւատով և կացին յանդիման»[1]:

Կարդում ենք կոմիտասյան շարականում: Հռիփսիմե կույսին նվիրված մի այլ գեղեցիկ բանաստեղծություն («Ի սուրբ կոյսն Հռիփսիմէ») ունի Շնորհալին[2].

«Ռահահորդ ուղևոր երկնընթաց,
Օրինաց երկնանոյն խորազգաց,
Ուրացեալ զանձն և զփառս հայրենեաց.
Հըրեշտակ հրաշափառ Հռիփսիմէ»[3]:

Գլխավորապես կանոնավոր կշռույթի, ապա և բաղաձայնույթի շնորհիվ բանաստեղծությունը երաժշտականություն է ձեռք բերում և կրում է հուզական բավականաչափ մեծ բեռ: Նրա յուրաքանչյուր տունը ավարտվում է միևնույն՝ «Հըրեշտակ հրաշափառ Հռիփսիմէ» տողով, որը նույնպես նպաստում է երաժշտականությանը: Բանատողերը կանոնավոր են, կազմված են երեքական անապեստից (վերջատանջ):

Հայ բանաստեղծության զարգացման հաջորդ շրջանում (ԺԳ դարից հետո) նույնպես գրվել են վկայաբանական քերթվածներ: Ու թեև սկզբից ևեթ որոշ հանգամանքներով տարբերվել են դրանք իրարից, այստեղ է, որ նկատելիորեն բաժանվում են առանձին ենթատեսակների, ստանում ժանրային որոշակիություն: Եթե փոքրածավալ գործերը պարզապես ողբ, գովք կամ ներբող են եղել իրենց նահատակ հերոսներին, ապա ավելի ծավալունները այդ գովքին, փառաբանությանը միացրել են նաև սյուժե,

---

[1] Ձայնքաղ Շարական, Վաղարշապատ, 1888, էջ 327: Տես նաև «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», Երևան, 1979, էջ 22:

[2] Տե՛ս **Ներսես Շնորհալի**, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 474—475: Բանաստեղծության տների առաջին տողերի սկզբնատառերը հոդում են **Հռիփսիմէ** անունը:

[3] Նույնը, էջ 474:

պատմել հերոսի գործած սխրանքը: Ուշ միջնադարում հանդիպում ենք նաև վկայաբանական բովանդակությամբ գուսանական երգերի, նույնիսկ՝ տապանագրերի[4]:

Ծավալով ու բնույթով տարբեր բոլոր այս ստեղծագործությունները համատեղված են **տաղ** անվան տակ, բայց առնվազն երեք տեսակի են պատկանում. Ա. ողբ-բանաստեղծություններ, ուր եղերերգական շեշտով լալիս են նահատակի կորուստը. Բ. ներբող-գովքեր և, վերջապես, Գ. քերթվածներ (պոեմներ):

Վկայաբանական բանաստեղծությունները փոքրածավալ են (1—2 էջ): Այստեղ փառաբանվում են նահատակի կամքի ուժն ու կայունությունը, նրա սխրանքը: Սա բանաստեղծություն է, չունի սյուժե, կամ կան սյուժեի ինչ-որ տարրեր: Երբեմն հերոսը համեմատվում է այս կամ այն սրբի և կամ նշանավոր վկայի հետ: Փոքրածավալ բանաստեղծական խոսքը հնչում է մեծ մասամբ իբրև ձոն, ներբող: Դրանք նաև քնարական են, արտահայտում են հեղինակի ապրումներն ու զգացումները:

Մյուս խումբը այն ստեղծագործություններն են, ուր պատմվում է նահատակությունը, դիպվածի մանրամասները, այսինքը՝ սրանք սյուժե ունեն, հաճախ՝ մի քանի, զուգահեռ կամ խաչաձևվող գծերով զարգացող, ունենում են նաև բարոյախոսական մաս, խրատական բնավորություն, ողբում են նահատակի մահը կամ (ավելի շատ) ասում, որ ողբալու փոխարեն ցընծալ, ուրախանալ է պետք, որովհետև վկա լինելը երանություն է: Մի փոքր ավելի ուշ այս երկու զգացումները հանդես են գալիս համատեղ. ուրախություն է ապրում հեղինակը այն գիտակցությունից, որ վկան գնում, միանում է անմահներին, ողբում՝ որ իրենցից հեռանում է:

Դեպքը պատմելիս հեղինակն աշխատում է ընդգծել անօրենների դաժանությունները, չարագործության թողած ազդեցությունը ինչպես հավատացյալների, այնպես և անհավատների վրա: Հեղինակի անձնական զգացմունքները արտահայտություն չեն գտնում, լավագույն դեպքում նա գործածում է ինչ-ինչ դեկորատիվ բառեր, որ կոչված են արտահայտելու նրա վերաբերմունքը, ի տարբերություն ողբերի հեղինակների, որոնք իրենց զգացմունքները, ցավը նույնպես արտահայտում են: Սրանք ավելի ակնհայտորեն կրում են Ներսես Շնորհալու Ողբի ազդեցությունը: Եվ պատահական չէ, որ տաղերում Գրիգոր Լուսավորչի, Վարդանանց, Հռիփսիմյանց և մյուս սրբերի նման հիշվում է նաև ԺԲ դարի մեծ բանաստեղծը:

Դեպքերը շարադրելիս ամենից կարևորը հեղինակի համար վկայի հերոսական կեցվածքն ու անսասան վարքագիծն ընդգծելն է, նրա բարձր, անխախտ հավատը շեշտելը՝ ամեն կերպ, ամեն առիթով:

Վկայաբանական երկերն առհասարակ, արձակ թե չափածո, ունեն միտումնավոր, հետևողական գաղափարաբանական հենք. դա նրանց ամենից ավելի աչքի ընկնող հատկանիշն է թերևս:

Իսկ ինչպես են վկայաբանական տաղերի հեղինակներն անվանում իրենց կատարած աշխատանքը և, որ առավել կարևոր է, երկը: Այդ անվանումներն ամենից առաջ հանդես են գալիս վերնագրերում (որոնք միշտ չէ, որ հեղինակինն են լինում): Այստեղ դրանց մեծագույն մասը կոչվում է **տաղ**: Մյուս մասը բանակապի մեջ կատարում է նշում՝ **բան** (Քրեստոմատիա, էջ 340—345, 504—516, 599, 620—627), և, ի վերջո, բուն ստեղծագործության մեջ՝ **տաղ** (629), **ճառ** (357), **ողբ** (629), **վէպ ճառին** (646) և այլն: Այս տեսակետից ուշագրավ է Բարղամի որդի Միքայելի «Պատմութիւն տաղիւ չափեալ ոտանաւոր նահատակութեան Դաւթի Սեբաստացւոյ» քերթվածի սկիզբը.

«Ի պատմութիւնս երգոյ տաղաչափական՝
Կամիմ ըզքէն ճառել, վրկա՛յդ պատուական...
Խընդրեա՛ ի Քրիստոսէ տալ մըտաց իմ բան՝
Վիպասանս յարմարել քեզ ներդաշնական.
Թէպէտ մեղապարտ եմ և ոչ եմ արժան՝
Ներբողել զքաջութիւն քոյդ վրկայութեան:
Սակայն փափագ սըրտիս ըստիպէ յայս ջան՝
Լինել ինձ ձեռնամուխ վեհիդ պատմութեան,
Ընկա՛լ, մեծդ, ի փոքրէս ընծայ ւ՚աղերսան,
Ի տարտամ անձնէս քեզ յիշատակարան»:
(504)

[4] Տե՛ս, օրինակ, «Հայոց նոր վկաները», աշխատասիրությամբ Հ. Մանանդյան և Հր. Աճառյան, Վաղարշապատ, 1903, էջ 565—566, 569—571 նն: Այսուհետև սույն գրքին վերաբերող հղումները՝ շարադրանքի մեջ, փակագծերում: Ստեփանոս Նախավկային է նվիրված Հովհաննես եպիսկոպոս Հալեպցի երգչի (ԺԷ դ.) հետևյալ հանելուկը.

«Գլուխ և աւարտ նոյն տառ կաղեալ,
Հինգ ամանակ եռ վանգ եղեալ,
Նահատակաց վարձ սահմանեալ,
Անուն պըսակ ստուգաբանեալ»:

(**Ա. Մնացականյան**, Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980, էջ 507):

Այստեղ առկա են՝ **պատմութիւն երգոյ տաղաչափական, ճառել, վիպասանք, յիշատակարան**, որոնք մասամբ կիրառված են, սակայն, առանց որոշակի սկզբունքի, տարբերակման, անհամակարգ բառեր են, և ոչ՝ գրական եզր: Բայց, այնուամենայնիվ, սա ցույց է տալիս, որ ուշ միջնադարի հեղինակները դեռևս ինչ-որ աղոտ, հեռավոր պատկերացում ունեն հին տեսակների համակարգի վերաբերյալ, ծանոթ են նրանց անվանումներին:

Մյուս կողմից, հեղինակն իր կատարածն անվանում է՝ **յարմարել ներդաշնական, ներբողել**: Ուրիշները ևս ունեն այսպիսի ակնարկություններ. **շարադրեալ** (599), **երգել** (277), **ասել** (401—408—բանակապ), **գրել** (629, 646): Հեղինակներից մեկը (Հովհաննես Կարնեցի-Հաննա) իր գրած նախնական տարբերակը համարում է «անյարմար ոտնաշարութեամբ գրեալ», վերստին անդրադառնալով տաղին, ասում է՝ «ընդլայնմամբ և տասնավանկեայ ոտնաչափութեամբ շարագրեցի և պարբերութեամբ տրոհեցի, ի գլուխս գլուխս բաժանեալ, յորոց գլխոց նախատառիցն յայտ եղանի անունն չընչնոյս» (574): Հետաքրքիր է այս տեսակետից, որ Հովհաննես աբեղան Վառվառե և Մարիամ վկայուհիների տապանագրերի բանակապի մեջ իրեն անվանում է **հիւսող** և **շարահիւս**, մեկ ուրիշը՝ **յարմարող** և այլն:

Այն ենթատեսակները պահպանվեցին մինչև ուշ միջնադար, նույնիսկ հասան մինչև նոր ժամանակները: Այս երկու շերտը նկատելի է նաև նոր վկաներին նվիրված տաղերում: Ըստ այդմ, ծավալուն երկերը, որոնք սյուժե ունեն, կոչվել են պայմանաբար պոեմ, փոքրերը՝ բանաստեղծություն:

Բայց նոր վկաներին վերաբերող տաղերն այլևս չունեն նախորդների հանդիսավորությունը: Ընդհակառակն, սրանք ավելի ժողովրդային, դեմոկրատիկ շունչ ունեն, ավելի անպաճույճ շարադրանք, հաճախ՝ մտերմիկ շեշտ: Իհարկե, ինչ-ինչ հարցերում սրանք կապված են նախորդների հետ, կան ընդհանուր տեղիներ, և վերջին հաշվով սրանք նրանց շարունակությունն են, չէին կարող ամենևին կապ չունենալ: Շնորհալին Վարդան Մամիկոնյանին դիմելով ասում է.

«Վարդա՛ն, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթշնամին,
Վարդագոյն արեամբդ քով պըսակեցեր զեկեղեցի»:

Այստեղ առկա են՝ **բաղաձայնույթ** (վ) և **բառախաղ** (Վարդան-վարդագոյն): Այս և այս կարգի մյուս երևույթները կրկնվում են, անշուշտ, նոր վկաների կապակցությամբ, նույնիսկ կարելի է հետագայում հանդիպել նո՛ւյն «վարդագոյն արիւն» արտահայտությանը. «Եւ վարդագոյն արիւն հեղին» (348), «Եւ վարդագոյն արիւնդ քո հեղաւ յերկիր» (410), «Զի զվարդագոյն արիւնքն յերկիր եհեղ» (397): Այսպիսի բառախաղերը սիրելի են ուշ շրջանի գրողներին. «Աստուածատուր-աստուածասէր» (401), «Լո՛յս Պարոն—լո՛յս եղեր մէջ աշխարհի» (407) և այլն:

Վկայաբանությունը, ինչպես առհասարակ սրբախոսությունը, իր բնույթի պարտադրանքով հիմնականում նույնական է մյուս քրիստոնյա ժողովուրդների (ասենք՝ բյուզանդական, ասորական ևն) նույն կարգի գործերի հետ: Որովհետև տաղերը ստեղծված են արձակ վկայաբանությունների հետևողությամբ, իսկ վերջինս ընդհանրական տեսակ է:

Այդ երկերում նահատակը անհրաժեշտաբար տիպականացվում է, հարմարեցվում ինչ-ինչ պահանջների, կաղապարի: Ինչպես նկատել է Ք. Տեր-Դավթյանը, վկայաբանությունները «վարքերի կողքին և, նրանցից էլ ավելի կենսունակ, շարունակում են գոյատևել ընդհուպ մինչև XVIII—XIX դարերը»[5], որովհետև նահատակության երևույթը հայ կյանքում շատ տարածված-սովորական էր: Այդ է պատճառը, որ վկայաբանական բնագրերի աշխարհագրությունն ընդգրկում է գրեթե ամբողջ Հայաստանը՝ Արցախից Բարձր Հայք, Խաչենից Գողթն, Վասպուրականից Կարին ու Ամասիա, այլև բազմաթիվ հայկական գաղթավայրեր, մինչև Ղրիմ, մինչև Լեհաստան:

Մեզ հետաքրքրող տաղերից շատերն ունեն իրենց արձակ նախօրինակը կամ տարբերակը: Դրանց առկայությունը հնարավորություն է տալիս համեմատելու արձակ և չափածո վկայաբանությունները: Այս առումով հետաքրքիր են մանավանդ այն զույգերը, որ պատկանում են միևնույն գրչին: Այսպիսի զույգեր են՝ «Գանձ տեառն Զաքարիայ կաթողիկոսի Աղթամարայ, ասացեալ ի Գրիգոր վարդապետէ» (+1393 թ., էջ 177—181, արձակը՝ 170—176), Պարոն Լոյս Կաֆացի նահատակին նվիրված՝ Վրթանես վարդապետի տաղերը (+1567 թ., էջ 396—400, 401—408, արձակը՝ 386—394), Ստեփանոս արքեպիսկոպոս Սեբաստիոյ (+1383, 149—150, արձակը՝ 137—

[5] Ք. Տեր-Դավթյան, XI—XV դարերի հայ վարքագրությունը, Երևան, 1980, էջ 29:

145)[6], «Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Տէրենց Գրիգոր վարդապետի Խլաթեցւոյ» (+1426, 247—275, արձակը՝ 264—272), Գասպար, Մարիամ և Վառվառե Կարնեցիք (+1810, 646—673, արձակը՝ 631—644): Բացի արձակ վկայաբանություններից, նահատակությունների մասին տեղեկություններ հաղորդում են նաև այլ աղբյուրներ (պատմիչներ, ժողովրդական ավանդություններ ևն): Համեմատությամբ կարելի է նկատել, որ արձակ և չափածո վկայաբանությունների միջև սկզբունքային տարբերություն չկա: Արձակը ավելի հանգամանորեն է վիպում, պատմում դիպարշարը:

Ինչպես արձակ, այնպես էլ չափածո վկայաբանություններում ավել կամ պակաս մանրամասնությամբ նշվում է նահատակության տարին, օրը, ավուր պատկերը: Բացառությունները անճշան են և աղավաղման հետևանք գլխավորապես: Մեծ մասամբ ժամանակը նշում են անմիջապես տաղի սկզբում, ուրիշները՝ վերջում, երրորդները՝ և՛ սկզբում, և՛ վերջում:

«Ռամեալ ընդ նըմին
Չորս հարիւր թըւին,
Եօթն պակաս ամին,
Յամսեան մեհեկին,
Տասնհինգ օրին,
Չորեքշաբաթին,
Ջմեր հովիւ բարին
Նահատակեցին
Վասն անուան քոյին»: (179)

Գրում է Գրիգոր վարդապետը, դիմելով Քրիստոսին:

Քերթվածի սկզբում դրված այդպիսի նշումները միաժամանակ առաջաբանի, նախադրության դեր են կատարում: Այստեղ ակնարկվում է կատարված իրողության մասին, որ մոտադիր է բանաստեղծը պատմելու: Հովասափ Սեբաստացին, օրինակ («Ոտանաւոր վասն Կոկճայ նահատակին Սեբաստիոյ»), գրում էր.

Յինըն հարիւր Հայոց թուին,
Ութսուն և հինգ աւելորդին՝
Խիստ մեծ կսկիծ ողորմագին
Եղաւ մանկանըս Կոկճային»: (373)

[6] Համտ. «Տաղ տէր Ստեփանոսին՝ Սիւնեաց եպիսկոպոսին»: Այս երկուսի փոխհարաբերության վերաբերյալ դիտողություններ տե՛ս **Պ. Խաչատրյան**, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ—ԺԷ դդ.), Երևան, 1969, էջ 303:

Այս կարգի նախաբանն ընթերցողին անմիջապես կանգնեցնում է գործողության շեմին, և հեղինակը պատմում է արդեն բուն դեպքը:

Նաև այլ բնույթի նախադրություններ են լինում: Մեծ Պարոնը («Տաղ Խըտըրշայ մանկան, որ ի Մարզըւան քաղաքն է նահատակեալ»), որ իր երկին դաստիարակչական նշանակություն է տալիս և պարզապես **խրատ** անվանում, նախ դիմում է իր ունկնդրին (ընթերցողին), թե՝ «Աղէ՛կ լըսէ, զականջըդ բաց» (376), ավելի մոտենալով խրատական-ուսուցական բանք-պոեմներին: Ունկնդրի սրտում հայրենասիրական կրակ վառելու ձգտումով, նա իր պատմությունն սկսում է հեռվից, անդրադառնում հայ ժողովրդի քաղաքական պատմությանը, նախանկզբին կամ նախապատմությանը, փաստորեն մատնացույց անելով կատարված դժբախտությունների պատճառը.

«Մեք թագաւորք ունէաք օծած,
Մեծ մեծ իշխանք. ան այլ գընա՞ց.
Որ զմեզ թողին ի մէջ տաճկաց,
Հուքմըն կ'առնէր ամէն խուզած: (377)

Տաճիկները մեծ զորքերով հարձակվում են Հայաստանի վրա, և հեղինակը, թերևս ժողովրդական բանահյուսությունից եկող, մի գեղեցիկ համեմատությամբ ցույց է տալիս դրանց կատաղությունը.

«Ձերդ քացխով տիկ՝ չարով լըցած,
Ջինչ ըզգազան հետով հարած...» (Անդ)

Նախադրությանը հաջորդում է վկայաբանական տաղերի երկրորդ, հիմնական մասը, ուր ներկայացնելով ու գովաբանելով հերոսին, հեղինակը պատմում է իրեն զբաղեցնող դեպքերը, աշխատում ստեղծել նահատակի հերոսական կերպար: Եվ չնայած որոշ կաղապարայնության առկայությանը, երբեմն բուն հերոսի, անձնավորության անհատական գծերը նրան տալիս են ինքնուրույն, սեփական գույն ու դեմք, անհատականություն: Ճիշտ կլինի նաև ասել, որ այստեղ անհատականությունը վերջին հաշվով դրսևորվում է ավելի փոքր, թերևս երկրորդական հանգամանքներում, քանի որ այս կարգի հերոսների համար գլխավորը ոչ թե թանձրացական, կոնկրետ գործն է, այլ ընդհանուրը, վերացականը, այն, որով նրանք միավորվում են մեկ հասկացությունի՝ վկա, նահատակ: Ուստի հասկանալի է, որ այս հերոսները ոչ միայն նման են, այլև հաճախ՝ նմանակներ:

Քերթվածների երկրորդ մասում են ծա-

վալվում գործողությունները, սյուժեն: Հասկանալի է, սա վիպական բնույթ ունի, ի տարբերություն առաջին մասի, որ բնարական, սովելի շատ ճարտասանական է, և երրորդի, որը նույնպես կա՛մ բնարական, կա՛մ ճարտասանական է բնույթով:

Անհավատ թշնամիների ձեռքն ընկած նահատակը զրպարտվում է, ենթարկվում երկու կարգի փորձության՝ մարմնական կտտանքների և գայթակղության. աշխատում են ինչ հնարքով ուզում է լինի, ամեն կերպ, ամեն գնով, ապառնալիքներով, տանջանքներով, թե կաշառք-խաբեությամբ, հավատափոխ անել հերոսին: Այդ նպատակին հասնելու համար ինչպես մոլեռանդ ամբոխը, այնպես էլ նրանց առաջնորդները, պաշտոնյաները՝ դատավորներ, դահիճներ և այլն, յուրաքանչյուր դեպքում տանջահարության նոր ձև ու միջոց են գործադրում, երբեմն այդ բնագավառում ցուցաբերելով հազվագյուտ հնարամտություն, հանճար:

Միջոցներից ամենատարածված-սովորականը վկային քարկոծելն է: Ահա, կտրում են հերոսներից մեկի լեզուն (374), խաչում, կախում «գլուխ ի վայր» և քարկոծում (375), բրածեռ անում ու կոճղապնդում, ունելիով կեղեքում մարմինը (508), կախում են գլխիվայր (509), դնում են «զոտսն ի փայտի», տակը ջուր լցնում, որ սառչի (510), ոտքերը «կոճղ» դնում, «զինուքն խրծրծէին» (511), երիցս իջեցնում խորխորատը և հանում (512), ճնեցնում հրաշեկ տապակին, երկաթյա ճաղերով «լրղունգրս հատեալ»՝ մատների ծայրերից ներս են խրում ճաղերը (623) և այլն: Մի ուրիշ դեպքում փայտ են դիզում, խարույկ վառում, նահատակին փաթաթում խսիրով և նետում կրակի մեջ (331)...

Երբեմն այդ չարչարանքները բոլորը միասին են լինում. Գրիգոր Խլաթեցին (Ծերենց) վկայում է.

«...Սրրով խոցեցին,
Վիրաւորեցին,
Քարկոծ արարին,
Խորտակեալ հարին,
Ջարդեալ մանրեցին
Ըզգըլուխ նորին.—
Ուրա՛խ էր հոգին: (179)

Երբ հարցաքննում են վկային, սա աշխատում է կտրուկ լինել պատասխանելիս, անզիջում, շեշտել քրիստոնեության առավելությունը: Մանուկ Խտրրշային (+1541) ստիպում են մահմեդականություն ընդունել: Նա ոչ միայն մերժում, հրաժարվում է, այլև վիրավորանքներ է ուղղում այդ կրոնի հասցեին, հեգնում.

«Ասաց թէ՝ ինձ հանց մի՛ ասէր,
Այդ ինձ թրւի բան զշուն դեղած.
Հոգոյս չունի՛ք իշխանութիւն,
Ահա մարմի՛նս հատիր կանգնած:
...Հընցկուն հաւատ ո՞վ է տեսեր
Ի վրայ մարդոյ նորով ձրգած: (381)

Նրա այս կեցվածքը բնականաբար ավելի է կատաղեցնում մոլեռանդ չարագործներին, և պատիժն ավելի խիստ է լինում: Իսկ դա նահատակին ցանկալի է: Բայց ավելի շատ են այն նահատակները, որոնք այս կամ այն նկատառումով չեն ցանկանում հայհոյել կամ հեգնել պարտադրվող կրոնը: Նրանցից շատերը հենց ցանկանում են դանդաղ տանջամահ լինել ի հեճուկս չարագործների, որ ավելի փառավորեն սեփական կրոնը: Դավիթ Սեբաստացի նահատակին իր հին բարեկամ Էմիրը խորհուրդ է տալիս՝ Ինչո՛ւ ես դանդաղ տանջամահ լինում, հայհոյի՛ր մեր հավատը, եթե չես ուրանալու, որ «ճեպով ըսպանցեն»:

«Սուրբն ասէ՝ Մի՛ տացէ Աստուած ինձ
խօսել
Հենգն ինչ, և մեղաց ձեր իմ կրցորդ լինել...»
(512)

Եվ որքան նահատակները նման են իրար (վարվելակերպի, վարքագծի կամ կեցվածքի ուղղագծությունն), գրեթե նույնքան տարբեր են բացասականները, այսինքն նրանց տանջողները, բանի որ ամեն անգամ նոր դեմքով են հանդես գալիս, նոր չարություն են մտածում ու գործում: Վերջինների նմանությունը միայն այդ ձգտման մեջ է: Կարծես մրցում են, թե ով ինչ նոր բան կհորինի, և այդ «գյուտերը» ևս նրանց օժտում են սեփական, անհատական գծերով: Անհրաժեշտ է նշել, որ այս բացասական կերպարները երբեմն գութ են ցուցաբերում, մարդկային ինչ-որ դրական հատկանիշներ ի հայտ բերում, որով նրանց կերպարն ավելի բազմակողմանի է դառնում ու ավելի կենդանի: Մինչդեռ նահատակները միայն դրական հատկանիշներով են օժտված:

Մյուս կողմից, բռնադատիչները քաղցր լեզու են բանեցնում, շողոքորթում վկային, աշխատում նրան համոզել, հրապուրել մահմեդականություն ընդունելուց հետո տրվելիք բարիքներով:

Դատարանի ճանապարհին վկային ցույց են տալիս մի տանկացածի՝ «Տե՛ս զի սա

տաճկացաւ և փառաւորի» (508), արծաթ, «թամբեալ ձի», զգեստ նվիրում, խոստումներ են տալիս:

«Այլ և ծանուցանեմ զքեզ թագաւորին՝
Զի քեզ գեօղըս տացէ և սրպայութիւն»:
(509)

Նույն վկային մեկը (Սիեահ) ասում է.

«Ո՛րդեակ, մի տար ի մահ ըզքոյդ
մանկութիւն,
Զհաւասակդ վայելուչ ի յրսպանութիւն.
Եւ ես տաց ըզդուստր իմ քեզ ի կընութիւն,
Եւ ըզքեզ գրրեցից ինձ յորդիութիւն»: (511)

Աստվածատուր Խրթայեցուն թախանձում են (355), Կոկճա Սեբաստացուն աղաչում (374), Պարոն Լույս նահատակին պարգևներ խոստանում և սպառնալիքներ կարդում (403): Օրինակները կարելի է բազմապատկել: Այսպիսի իրավիճակում, ահա, նահատակները հանդես են բերում իրենց հոգու արիությունը, տոկունությունը, կարողանում են դիմագրավել ամեն տեսակ բրոնության ու գայթակղության, ցուցաբերել անկոտրում հավատ ու կամք, անդավաճան նվիրվածություն, անսայթաք վճռականություն: Դրական հերոսների՝ նահատակների անդրդվելի հավատը, նվիրումը ընդհանուր երևույթ է վկայաբանական տաղերի համար: Դրանով իսկ այդ հերոսները նման են իրար: Եվ որքան մեծ գայթակղության ու տանջանքների են դիմադրում, այնքան նկատելի, մեծ, ուսանելի է նրանց սխրանքը: Վերջինս, սակայն, ունի մի այլ կողմ ևս: Գևորգ Սկևռացու վարքի կապակցությամբ խոսելով վկաների տանջանքների մասին, Ք. Տեր-Դավթյանը նկատում է, թե վկայաբանության հեղինակը «բացասական հերոսներին դատապարտելիս հաճույքով դիմում է նրանց չարագործությունների կոնկրետ նկարագրությանը, քանի որ ինչքան շատ չարագործություններ նկարագրվեն, այնքան ավելի մեծ պարսավանքի կարժանանան բացասական անձնավորությունները»[7]: Բայց չէ՞ որ դրանով նաև ավելի մեծանում, ընդգծվում է դրական հերոսի գործը:

Վկայաբանական քերթվածի, ինչպես և արձակ վկայաբանության մեջ, պակաս կարևոր չէ նահատակի հետ կապված հրաշքների, տեսիլների առկայությունը: Դա քերթվածի կառուցվածքային երրորդ բաղադրիչն է: Առհասարակ նահատակի սրբության ամենաակնհայտ նշանը լույսն է, որ քրիստոնեական հավատի խորհրդանիշն է և այնքան առատ է վկայաբանությունների մեջ:

«Լոյսն ի յերկնից ճառագայթեալ,
Ըզսուրբ նըշխարսըն պարփակեալ,
Զբոլոր զամէն լուսով լըցեալ,
Իբր ըզճրագ լուսոյ փայլեալ: (348)

Այս լույսը ամենուրեք հակադրված է անօրինության խավարին և շատ հաճախ ուժ է ներշնչում նահատակներին:

Իհարկե, լույսն իբրև խորհրդանիշ միայն վկայաբանություններում չէ, որ հանդես է գալիս: Այն հատուկ է ամբողջ քրիստոնեական մատենագրությանը, որտեղ, ինչպես հայտնի է, արևը Քրիստոսն է, քրիստոնեությունը՝ լույս, աղբյուր, սնունդ և այլն:

Վկայաբանական տաղերը շատ հաճախ երկար խորագրեր են ունենում: 1509 թ. նահատակված Ավետիք կրոնավորին նվիրված տաղը հետևյալ կերպ է վերնագրված. «Տաղ տէր Աւետիք կրօնաւորին, որ նահատակեցաւ ի ձեռաց թաթարաց աղեղնաւորաց ի նահանգին Դրիմի, ի վերայ ճանապարհին սուրբ Նշանի վանիցն և զոր շինեաց տէր Յոհաննէս Սեբաստացին, զոր կայ մինչև ցայսօր մեզ օգնական և պահապան» (346): Այսպիսի վերնագրերում արդեն սեղմ տրվում են հիմնական տեղեկություններ, որոնք ավելի հանգամանորեն պատմվելու են քերթվածում:

Ինչպես Կոմիտաս կաթողիկոսի, Ներսես Շնորհալու վերևում հիշված շարականները, վկայաբանական տաղերը ևս սովորաբար բանակապ են ունենում, որոնք հոդում են հայոց այբուբենը, հեղինակի կամ հերոսի անունը և կամ երկուսին միասին[8]: Հայտնի է, որ միջնադարյան գրականության ուսումնասիրողին շատ բանով օգնում է բանակապի առկայությունը: Դրանով հնարավոր է պարզել բազմաթիվ հարցեր, ճշտել հեղինակի ինքնությունը, հայտաբերել բնագրի խաթարումները: Պարոն Լույս Կաֆացուն վերաբերող տաղերից մեկը (սկ. «Աստուած Հայր երկնաւոր, զքէն գոհանամ, տէ՛ր, Որ դու զօրացուցէր ըզքո ծառայն, տէ՛ր» էջ 396—400) բանակապ ունի Ա-ից Ք, իսկ հետո՝ ՎԱ: Տաղի հեղինակը

[7] Ք. Տեր-Դավթյան, նշվ. աշխ., էջ 120:

[8] Ս. Էջմիածնի նվիրակների գլխատման տաղը ունի հետևյալ բանակապը. «Ի Յովանէս իցե հայացեալ ե բանս յնիերկերնա», որ անկասկած աղավաղված է: Առանձնապես հետաքրքիր է մեր ընդգծած բառը. ի՛նչ է ակնարկում հեղինակը դրանով: Անհավանական է, որ խոսքը թարգմանության մասին լինի: Տե՛ս «Հայոց նոր վկաները», էջ 345:

Վրթանես Սունկեցին է, որ գրել է նաև Լուսին նվիրված մեկ ուրիշ տաղ ու արձակ վկայաբանությունը: Ամենայն հավանականությամբ նա իր գործի վերջում գրել է իր անունը հոդող բանակապով հատված, որ, սակայն, աղճատվել, կիսատ է մեզ հասել. մնացել են միայն սկզբի երկու տառերը՝ Վա[րդանէս][9]: Նա իր մասին հայտնում է նաև ոտանավորի վերջին տան մեջ.

«Անուն մարտիրոսին սուրբ Պարոն Լոյս է,
Անուն երգող բանիս տէր Վրրթանէս է,
ՅԱյրարատեան յերկրէն Կաֆա եկեր է,
Անթիւ աւուր բանիւ զայս ասացեր է»:
(400)

Վկայաբանություններում պաշտպանվում է նաև Հայ Եկեղեցու դավանությունը, ուղղափառ միաբանությունը: Ուստի և բնական է, որ Գրիգոր Լուսավորիչը հանախակի հանդես է գալիս տաղերում: Երբ հարցաքննում էին Պարոն Լույս նահատակին, նրան քաջալերում է Գրիգոր Լուսավորիչը.

«Լուսաւորիչըն մեր երևեցաւ, տէ՛ր,
Պարոն Լուսին ասաց՝ Մի՛ վախենար, տէր,
Քրիստոս քեզ օգնական և պահապան, տէ՛ր,
Ելլ և ըզքեզ յիշէ Հայրն երկնաւոր, տէր:
(397)

Սրանք են վկայաբանական պոեմների ամենաընդհանուր գծերը, և յուրաքանչյուր հեղինակ այս կամ այն չափով հարազատ է մնացել ժանրի պահանջներին՝ ինչպես կառուցվածքի, ձևի, այնպես էլ բովանդակության առումով: Կան նաև շեղումներ, բացառություններ, որոնք արժանի են հատուկ ուշադրության (Գրիգորիս Աղթամարցու, Հովհաննես Կարնեցու քերթվածները): Այստեղ սյուժեն ավելի բարդ ու ճյուղավորված է, վիպական տարրը՝ տիրապետող:

Առհասարակ սրբախոսության մասին Ռ. Տեր-Դավթյանի արած հետևյալ դիտողությունը լիովին վերաբերում է նաև վկայաբանական տաղերին. «Վարքագրական, վիպական և պատմական սկզբունքների միացումը հերոսների կերպավորման գործում, որի անմիջական նպատակն էր բարձրացնել երկերի գեղարվեստական ներգործության ուժը, մյուս կողմից իր զորեղ ազդեցությունն է ունենում հայ սրբախոսության զարգացման ողջ հետագա ընթացքի վրա, դառնալով նրա առանձնահատկություններից մեկը»[10]:

[9] Բանաստեղծն իր անունը այս ձևով գրել է «Տաղ Պարոն Լուս նահատակին» քերթվածի մեջ.

«Մի՛ մոռանար երգող բանիս՝
Ըզվարդանէս անպէտ հոգին,
Ըզվարդապետն Հայոց ազգին,
Եպիսկոպոսըն Կաֆային:» (408)

[10] Ռ. Տեր-Դավթյան, նշվ. աշխ., էջ 37: